«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԹԻԿ» ՔԿՀ -ում
ԱՌԱՐԿԱ	**ՖԻԶԻԿԱ**
ՀԵՂԻՆԱԿ	ՅՈՒՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐԶ	ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«ԱՐԹԻԿԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 1

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԳԼՈՒԽ 1 ---------- 4

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԳԼՈՒԽ 2 ----------7

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԹԻԿ» ՔԿՀ – ՈՒՄ

«ԱՐԹԻԿԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ԳԼՈՒԽ 3 ----------9

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ----------12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ աշխարհում դատապարտյալների իրավունքների պաշտպանության ոլորտում առաջնային նշանակություն ունեն նրանց հետագա օրինապահ կյանքին անցնելու նախադրյալների ստեղծումը: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ քրեակատարողական հիմնարկում կազմակերպվող կրթությունը տալիս է սոցիալական, աշխատանքային և մասնագիտական այլ հմտություններ, որոնք օգնում են ազատազրկվածին հետագայում զերծ մնալ օրենքի հետ բախվելուց: Այդ նպատակով մի շարք զարգացած երկրներում կիրառվում են այդ սոցիալական խմբի համար մշակված կրթական ծրագրեր: Նման կրթական ծրագրերի մասով ՀՀ-ն առայժմ դանդաղում է, ճիշտ է ՀՀ սահմանադրությունն ամրագրել է անձի կրթության իրավունքը, որը համարվում է հիմնարար իրավունք:

Կրթության ոլորտում հիմնարար օրենքն է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որն ուղղակիորեն չի անդրադառնում քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հարցերին և այդ կանոնակարգող դրույթները սահմանված են ոլորտային օրենսդրությամբ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն ունի հնարավորություն օրենքով նախատեսված կրթություն ստանալու, ստեղծագործական աշխատանքով զբաղվելու իրավունք:

Այս իրավունքի իրացման համար կիրառելի են կրթության ոլորտին վերաբերող իրավակարգավորումները, իսկ նույն օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում կազմակերպելու դատապարտյալների հանրակրթությունը, նախնական մասնագիտական կրթությունը՝ պետության հաշվին, իսկ բարձրագույն և հետբուհական կրթությունն ինչպես իրենց հաշվին, այնպես էլ՝ համագործակցելով այլ կազմակերպությունների հետ:

Կանոնակարգի 70-րդ կետի համաձայն՝ բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների կրթությունը կարող է կազմակերպվել առկա ձևով, որը չպետք է խոչընդոտի պատիժը կրելու կարգը և պայմանները: Բանտարկյալներն իրավունք ունեն

կրթությունը շարունակել ՔԿՀ-ում: Այն «Արթիկ» ՔԿՀ-ում իրականացվում է «Արթիկի երեկոյան դպրոց»

ՊՈԱԿ-ի կողմից (բանտարկյալների հետ վարվեցողության միջազգային կառուցակարգերը

// ուսումնական ձեռնարկ // գլուխ II, 2.2.3 կետ Ա բաժնի 6 ենթակետ):

Քրեակատարողական հիմնարկներն իրենց հերթին բաղկացած են ուղղիչ հիմնարկներից, որոնք լինում են հինգ տեսակի՝

1. Բաց
2. Կիսաբաց
3. Կիսափակ
4. Փակ
5. Բուժական

Ըստ էության այս աստիճանակարգումն ուղղված է նաև անձի աստիճանակն ուղղման և հասարակություն վերադարձի տեսլականին: Ուղղիչ հիմնարկների տեսակների առանձնահատկությունները կարևոր է, որ կրթության գործընթացի կազմակերպումը տարբեր է դրանցից յուրաքանչյուրում՝ պայմանավորված տարածքային, ազատ տեղաշարժման, առանց հսկողության ելքի ու մուտքի իրավունքի տարբերակված պայմաններով, որոնք առկա են ուղղիչ հիմնարկներում:

Այսպիսով կրթության կազմակերպման համար շատ կարևոր է հիմնարկի տեսակը, քանի որ, պայմանավորված առանձնահատկությունից լրացուցիչ սահմանափակումներ կամ պահանջներ կարող են լինել կրթության կազմակերպման տեսանկյունից: Մասնավորապես, հիմնական խնդիրն անվտանգության ապահովման և կրթության կազմակերպման համատեղումն է :

Ավանդականորեն քրեակատարողական հիմնարկները չեն ընկալվում որպես կրթական միջավայրեր , հատկապես փակ, կիսափակ և բուժական հիմնարկները:

Այս մոտեցումը ձևավորել է այնպիսի գործելակերպ, որ կրթության կազմակերպումը

պահանջում է բավականին ռեսուրսներ,այդ թվում՝ մարդկային, որը երբեմն խոչընդոտում էկրթական գործընթացը:

Հակառակ ավանդական պատկերացումներին կրթական գործընթացը վերջին տարիներին կարծես թե նոր է իրավակարգավորումների նոր փուլ մտնում, մշակվել և գործածության է դրվել նոր կառուցվող քրեակատարողական հիմնարկներում կրթության համար անհրաժեշտ պայմաններ:

Կրթության և դաստիարակության սոցիալ հոգեբանական վերականգնման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց թվում հատուկ տեղ են գրավում դատապարտյալները: Եթե հաշմանդամները և դպրոցից դուրս մնացած այլ անձինք կարող են ուսումն ու կրթությունը շարունակել ներառական կրթության տարբեր օղակներում, ապա դատապարտյալները այդ հնարավորությունը չունեն, նրանց միակ տեղը ՔԿՀ-ում գործող դպրոցն է:

Ուսուցչի շփումը դատապարտյալների հետ, բարոյա-խրատական զրույցները՝ մարդու, Հայրենիքի ու ընտանիքի մասին խիստ անհրաժեշտ է դատապարտյալներին:

Մանկավարժը պետք է կարողանա ներազդել նրա մտքի, զգացմունքների վրա, որից կախված կլինի դատապարտյալի ապագան:

ՔԿՀ-ում հանրակրթություն իրականացնելիս պետք է հարգել մարդու՝ դատապարտյալի սահմանադրական իրավունքները, առանց խոչընդոտներ ստեղծելու նրանց դպրոց ներգրավելու՝ հաշվի առնելով նրանց կարգավիճակը և առանձնահատկությունները, պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ սահմանված ընդունելության կարգը:

ՔԿՀ-ում դասավանդող ցանկացած մանկավարժի հիմնական նպատակը պետք է լինի սովորող – դատապարտյալին, որպես սովորական նորմալ, հոգեպես կայուն մարդ վերադարձնել հասարակությանը: Այս աշխատանքը շատ բարդ է, մանկավարժից պահանջվում է հանդուրժողականություն, մտնել դատապարտյալի դրության մեջ, չվիրավորել նրա ինքնասիրությունը, լինել համբերատար և արդար նրանց նկատմամբ: Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ մանկավարժը եթե ոչ 100%, բայց դրական արդյունք

կունենա իր անխոնջ աշխատանքի արդյունքում:

1. Կրթության հասանելիության հիմնախնդիրը քկհ-ներում - // կառավարության ծրագրում //
2. ՔԿՀ-ներում կրթական գործընթացի կազմակերպման պահանջներ և պայմաններ
3. Կրթությունը «Արթիկ» ՔԿՀ-ում / «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ

Վերը նշված երեք հարցերը կքննարկենք առանձին գլուխներում:

ԳԼՈՒԽ 1

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում դատապարտյալների կրթության իրավունքի հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել մարդու իրավունքների միջազգային ուղենիշների սահմաններում, ինչպես նաև ներպետական օրենսդրության, մասնավորապես՝ կրթության և քրեակատարողական ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի շրջանակներում:

Միջազգային հռչակագրերը, կոնվենցիաները, կանոնները, բանաձևերը և առաջարկությունները սահմանում են մարդու իրավունքների համընդհանուր շրջանակը՝ այդպիսով կարգավորելով նաև ՔԿՀ-ներում կրթության իրավունքը: Դրանք կրում են խորհրդատվական բնույթ և ուղենշային, քաղաքական, սոցիալական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական համակարգի՝ միջազգային չափորոշիչների համապատասխանեցման համար: Բոլոր միջազգային փաստաթղթերը կիրառելի են Հայաստանի Հանրապետության համար: Դատապարտյալների կրթական ծրագրերը հետապնդում են հետևյալ նպատակները՝ մեծացնել հասարակության մեջ ազատազրկվածների վերընդգրկվելու հնարավորությունները, թույլ չտալ նրանց հոգեպես ընկճվել, բարելավել դատապարտյալների վարքագիծը: Եթե անդրադառնանք ներպետական օրենսդրությանը, ապա ՀՀ սահմանադրությունն ամրագրել է անձի կրթության իրավունքը և այն հիմնարար իրավունք է: Կրթության ոլորտում հիմնարար օրենքն է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որն ուղղակիորեն չի անդրադառնում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հարցերին և այդ կանոնակարգող դրույթները սահմանված են ոլորտային օրենսդրությամբ: Այս իրավունքի իրացման համար կիրառելի են կրթության ոլորտին վերաբերող իրավակարգավորումները, եթե այլ բան նախատեսված չէ քրեակատարողական օրենսդրությամբ: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպելու համար: Դատապարտյալի կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:

Կանոնակարգի 70-րդ կետի համաձայն՝ բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների կրթությունը կարող է կազմակերպվել ստացիոնար ձևով, որը չպետք է խոչընդոտի պատիժը կրելու կարգը և պայմանները: Ուղղիչ այլ հիմնարկներում ստացիոնար կրթություն չի իրականացվում: Ներքին կանոնակարգը սահմանում է նաև, որ շինություններում, ելնելով դատապարտյալներին պահելու՝ օրենքով նախատեսված պայմանների առանձնահատկություններից, ի թիվս այլ կառույցների (ճաշարանը, կրպակը կամ խանութը, բուժկետը, տեսակցության սենյակները և այլն)՝ պարտադիր տեղակայվում են նաև դպրոցը, գրադարանը, զբաղվածության, մշակութային միջոցառումների անցկացման սենյակները և այլն: Ու թեպետ վերջին տասը տարիների ընթացքում որոշ հիմնարկներ վերանորոգվել ու բարեկարգվել են, կառուցվել է նոր ՔԿՀ («Արմավիր» ՔԿՀ): Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգի և համապատասխան օրենսդրության բացակայությունը խնդրահարույց է, և, ելնելով դրանից, կարգավորումներ չկան ոչ ֆորմալ կրթության այնպիսի ծրագրերի համար, որոնք կարճաժամկետ դասընթացներն են: Հայաստանում 2018թ-ին տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների արդյունքում ձևավորված նոր իշխանությունը ևս, անձի կրթության իրավունքի ապահովումը հատուկ կարևորել է: Այսպես, «Ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացի» գլխում կառավարության ծրագիրն արժանապատիվ ու երջանիկ լինելու կարևոր բաղադրիչ է համարում կրթությունը՝ հատուկ ընդգծելով վերջինիս մատչելիությունն ու հասանելիությունը բոլոր քաղաքացիների համար: Սոցիալական վիճակն ու Հայաստանի աշխարհագրությունը չպետք է խոչընդոտի կրթության իրավունքի իրացմանը: Միևնույն ժամանակ կարևոր են նաև ՀՀ կառավարության ծրագրի արդարադատության բաժնում սահմանված նպատակները և դրանց իրականացման համարանհրաժեշտ նոր իրավական հիմքերը: 2019թվականի հոկտեմբերից արդեն իսկ շրջանառության մեջ է եղել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագիծը, որի 121-րդ հոդվածը, բացի վերը նշված կարգավորումներից լրացուցիչ ամրագրում է. «ՔԿՀ» - ներում կազմակերպվում է 30 տարին չլրացած դատապարտյալների հիմնական կրթություն:

Անչափահաս դատապարտյալի համար հիմնական կրթությունը պարտադիր է: Ուսումը շարունակելու, կրթություն ստանալու ցանկություն ունեցող դատապարտյալի համար ՔԿՀ-ի վարչակազմը և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինները ստեղծում

են անհրաժեշտ պայմաններ: Երեսունից բարձր տարիքի դատապարտյալն, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, հիմնական կրթություն են ստանում իրենց ցանկությամբ: Պատժի կրման ընթացքում դատապարտյալի կրթությունը խրախուսվում է և հաշվի է առնվում նրա վերասոցիալականացումը գնահատելիս: Դատապարտյալի հիմնական կրթության կազմակերպումը, քրեակատարողական համակարգի կրթական հիմնարկների ստեղծումը, վերակազմավորումն ու լուծարումն իրականացվում է ՀՀ Արդարադատության նախարարության սահմանված կարգով՝ համաձայնեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: Այսպիսով, եթե ամփոփենք դատապարտյալների կրթության կազմակերպման իրավական ակտերի հիմնական շրջանակը, ապա կարելի է եզրակացնել, որ միջազգային կանոնակարգող փաստաթղթերի շրջանակում ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և դրանից բխող այլ իրավական ակտերը սահմանում են դատապարտյալների կրթության իրավունքը որպես հիմնարար իրավունք, նկարագրում են նաև դրա իրականացման ընդհանուր կարգը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ գործող օրենսդրության շրջանակում կրթության կազմակերպման գործառույթները հիմնականում դրված են ՔԿՀ-ների վարչակազմերի վրա, այնինչ նման լիազորության իրականացումը պահանջում է կամ առանձնացված մարմնի կամ վարչական մարմնի / լիազոր մարմնի դերակատարություն, Հայաստանի Հանրապետությունում գործող ներառական կրթության հայեցակարգը և միտումները առավել բարենպաստ են կրթությունը բոլոր հաստատություններում հասանելի դարձնելու համար: Այնուամենայնիվ, դեռևս կան իրավակարգավորման խնդիրներ, չափորոշիչների համադրման անհրաժեշտություն, որի պարագայում միայն կրթության բոլոր ձևերը կարող են իրապես հասանելի լինել ՔԿՀ-ներում:

ԳԼՈՒԽ 2

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այսպիսով, եթե դիտարկենք ուղղիչ հիմնարկների տեսակով պայմանավորված կրթության կազմակերպման հիմնախնդիրները, կարող ենք նշել, որ կրթության կազմակերպման համար շատ կարևոր է հիմնարկի տեսակը, քանի, որ պայմանավորված առանձնահատկություններով, լրացուցիչ սահմանափակումներ կամ պահանջներ կարող են լինել կրթության կազմակերպման տեսանկյունից: Մասնավորապես, հիմնական խնդիրն անվտանգության ապահովման և կրթության կազմակերպման համատեղումն է:

Կրթություն կազմակերպելու համար (այդ թվում՝ ՔԿՀ-ներում) ոլորտային օրենսդրությունը և ՀՀ կառավարության կողմից նախատեսված կարգավորումները, ենթադրում են մի շարք պահանջներ ու պայմաններ (այդ թվում՝ համապատասխան տարածք, լաբորատոր պայմաններ, ուսուցչական կազմ, դասասենյակներ՝ համապատասխան կահավորմամբ և այլն), որոնք անհրաժեշտ են կրթության տվյալ տեսակը կազմակերպելու համար:

Ֆորմալ կրթության կազմակերպման դեպքում չափորոշիչները սահմանված են ՀՀ կրթության ոլորտի օրենսդրությամբ: Քրեակատարողական օրենսդրության պարագայում չափորոշիչները ներքին կանոնակարգով սահմանված անվտանգության պայմաններն են, որոնք պետք է երաշխավորվենբոլոր տեսակի միջոցառումների կազմակերպման համատեքստում: Այսպիսով, կրթության կազմակերպումը ՔԿՀ-ում երկու ոլորտների և միջավայրերի միավորում է, որոնց համադրումը պահանջում է մարդկային, կազմակերպական, տեխնիկական, շենքային ռեսուրսների համադրում:

Կրթական չափորոշիչները որպես տվյալ տեսակի կրթության պայմաններ ընդհանրական են, և սահմանված են կրթության որոշակի որակի և ազդեցության ապահովման համար: Պետք է նշել, որ ոչ միայն Հայաստանում, այլ նաև շատ երկրներում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի արդյունավետությունը և տարածվածությունն ազատազրկման

վայրերում հենց բխում է դրանց ճկուն լինելու հանգամանքից, որի շնորհիվ այն կարող է իրականացվել նաև սահմանափակում ունեցող հաստատություններում: Այնուամենայնիվ, եթե անդրադառնանք առկա ենթակառուցվածքներին, ապա առաջնային է կրթական տարածքների առկայության հարցը:

Անհրաժեշտ է նշել, որ ներկա ՔԿՀ-ներում առկա տարածքները, դրանց կահավորման առկա իրավիճակը ցույց է տալիս, որ կարիք կա, որպեսզի դրանք վերակառուցվեն, նորոգվեն, համալրվեն համապատասխան կրթական կահավորմամբ: Միևնույն ժամանակ այս չափորոշիչները պետք է հաշվի առնվեն նաև արդեն իսկ պլանավորվող ՔԿՀ-ի շենքային պայմանների նախագծման աշխատանքներում: Պետք է նշել, որ դեռևս 2011-2012թթ. ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ, ելնելով տվյալ ժամանակ գործող հանցավորության դեմ պայքարի ռազմավարության պահանջներից, ստեղծվել էր աշխատանքային խումբ, որը գնահատելու էր ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հարցերը: Հանձնաժողովը բացասական եզրակացություն էր տվել՝ հիմք ընդունելով, որ առկա շենքային պայմաններն անհամապատասխան են կրթության ցանկացած ձևի համար սահմանված չափորոշիչներին:

Անշուշտ, դա չի ենթադրում կրթության բացառում, այլ հակառակը՝ ՔԿՀ-ներում կրթական միջավայրի խնդրի բարձրաձայնում, և կրթության առաջնայնության խնդրի վեր հանում՝ ջատագովելով նաև շենքային ենթակառուցվածքների բարելավումը:

Գ Լ Ո Ւ Խ 3

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐԹԻԿ» ՔԿՀ – ՈՒՄ

«ԱՐԹԻԿԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

«Արթիկ» ՔԿՀ-ի տարածքում գործող ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ը գտնվում է 5-րդ մասնաշենքում,դասասենյակները հարմարեցված են : Դպրոցն ունի չորս դասասենյակներ, որոնք վերանորոգման խիստ անհրաժեշտություն ունեն, նվազագույնը՝ գոնե կոսմետիկ: Դասասենյակները անհատույց օգտագործման համար տրամադրել է ՔԿՀ-ի ղեկավարությունը՝ անժամկետ:

Դատապարտյալներին դպրոց ընդգրկելուց առաջ կատարում ենք նրա կարիքների բացահայտում և գնահատում, որից հետո կայացնում որոշում դպրոցի ո՞ր դասարան ընդունել, իհարկե հաշվի առնելով նաև այն, թե դատապարտյալը նախկինում՝ ազատության մեջ մինչև ո՞ր դասարան է հաճախել և ի՞նչ գիտելիքներ ունի:

Հարցերի միջոցով պարզում ենք նրա նախասիրությունները՝ ո՞ր առարկան է նա նախընտրում ավելի խորը ուսումնասիրել, ըստ այդմ կազմակերպում ենք նաև անհատական ուսուցում, նույնիսկ արտաժամյա, որ դատապարտյալը կարողանա զգալ իրեն որպես մարդ – աշակերտ, որի կարծիքը և պահանջմունքը գնահատվում է ըստ արժանավույն:

Դպրոցը կազմակերպում է 9-12 –րդ դասարանների հանրակրթություն, կոմպլեկտավորված չորս դասարան՝ 25 աշակերտներով: Դպրոցը ապահովված է համապատասխան որակավորում ունեցող մասնագետ ուսուցիչներով, իսկ դատապարտյալ – աշակերտների դասագրքերով ապահովելու խնդիրը տարիներ շարունակ անլուծելի է եղել և այդպես էլ մնում է: Երեք տարի կլինի, որ մի կերպ լուծվեց ուսուցիչների ձեռնարկների հարցը: Այս բացը պետք է, որ մտահոգի պետական մարմիններին, ասվածը ինչ որ բան նշանակում է. Շատ հաճախ եմ լսել, որ գիրք ունենայի … Պետք է լրջորեն մտահոգվել այս խնդիրը լուծելու հարցով:

ՀՀ կառավարության 2002թ-ի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային

կազմակերպությունները, որոնց թվին է պատկանում նաև Արթիկի երեկոյան դպրոցը, որի կանոնադրությունը վերանայման կարիք ունի, քանի որ նրանում սահմանված չեն այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են կրթություն ստացող անձանց կարգավիճակով, դպրոցի կազմակերպա-իրավական առանձնահատկություններով, դպրոցի խորհրդի կազմը ձևավորելուն վերանայված պահանջներ ներկայացնելով և այլ պայմաններով:

2020թվականի դեկտեմբեր ամսին վերջապես լուծվեց խորհրդի կազմավորման հարցը, կազմավորվեց և գործեց խորհուրդը, բայց արդյունավետությունը այլ քննարկման թեմա է: Բաց է մնացել ամենակարևոր լիցենզիայի հարցը, այսինքն դպրոցը իրավունք չունի իրականացնել հանրակրթություն և տասնյակ տարիներ դպրոցը իրականացնում է հանրակրթություն, չունենալով այդ իրավունքը, այժմ արդեն պահանջը խիստ է դրված՝ կամ լիցենզիա, կամ փակում: Դրա համար նորընտիր տնօրենը կարծես թե զբաղվում է այդ հարցով՝ առերևույթ: Նախորդ տնօրեններն անգամ կանչվեցին ԿԳՄՍ նախարարություն հանձնարարականներ ստացան՝ առաջարկություններ ներկայացնել կանոնադրությունը կազմելու համար ու այդպես էլ մինչև օրս մնացին անպատասխան: Եվ անհայտ է , թե այս վիճակը մինչև երբ կշարունակվի, հուսանք, որ շուտ կավարտվի այս անորոշ վիճակը:

Ես դասավանդում եմ ֆիզիկա առարկան, այս առարկայի ուսուցումն ունի դժվարություններ կապված լաբորատոր աշխատանքների հետ՝

ա) Չունենք լաբորատորիա

բ) Չունենք համակարգիչներ

գ) Ինտերնետ կապը բացակայում է դպրոցի տարածքում

Վերը նշված դժվարություններն ինչ որ չափ լրացնում եմ հիմնականում դիտակտիկ նյութերի, նկարների, գծագրերի և դատապարտյալ – սովորողների ձեռքի տակ եղած իրերով (որոնք թույլատրվում են ունենալ իրենց մոտ)՝

օրինակ.

Ճոճանակ պատրաստում ենք թելերի և ձեռքի տակ ունեցած որևէ ծարոցից, քանոնից, զսպանակներից:

Էլեկտրականության թեման ուսումնասիրելիս օգտվում ենք սովորող – դատապարտյալների ունեցած էլեկտրական սարքերից, փչացած սարքավորումների դետալներից:

Լույսի բեկումը ավելի հեշտ է ցուցադրվում, եթե կա ապակի, լապտեր, ջուր, օգտագործում ենք նաև օպտիկական ակնոցները՝ ոսպնյակներ թեմայի ուսուցման ժամանակ և այլն:

Տեղին է հիշել Չինական հայտնի ասացվածքը. «Ասա ինձ և ես կմոռանամ, ցույց տուր ինձ և ես կհիշեմ, թույլ տուր կատարեմ և ես կհիշեմ»: Այդ իսկ պատճառով ըստ իս անհրաժեշտ է , գոնե լաբորատոր աշխատանքների ժամանակ թույլ տալ գոնե օգտվենք համակարգիչներից (Կրթական կայք esource.armedu.am), վերը նշված բացը լրացնելու համար:

ՔԿՀ-ի սովորող – դատապարտյալների հետ իմ կողմից կատարված աշխատանքներն ինձ բերել են այն եզրակացության, որ նրանք նույնպես ունեն ձգտումներ սովորելու իհարկե որևէ առարկա, որն իր համար հոգեհարազատ է և ընկալելի:

Քանի որ նրանք հիմնականում բարձր տարիքի են, հասկացել են, որ կյանքում անհրաժեշտ է ունենալ գոնե մինիմալ գիտելիքներ, ազատվելուց հետո հասարակության հետ ինտեգրվելու համար:

Հիմնականում սովորողները լավ են ընկալում էլեկտրականության բաժինը, դա պարզվում է նրանց ակտիվ մասնակցությամբ դասերին, հարցերի միջոցով ստանում են պարզաբանումներ:

Մեր դպրոցի շրջանավարտներից ունենք սովորողներ, ովքեր ազատվելուց հետո ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Սրանից կարելի է եզրակացնել, որ մեր դպրոցը ինչ – որ տեղ դրական ազդեցություն է ունեցել դատապարտյալների վրա և նրանք ինտեգրվել են հասարակությանը: Այս տարիների իմ

աշխատանքի արդյունքը տեսնում եմ նրանում, որ մեր դպրոցի սովորող – դատապարտյալները դարձել են ավելի հանդուրժող, հանգիստ և ցանկանում են շարունակել ուսումը,այն դիտարկելով որպես կյանքի անբաժանելի մաս:

ՔԿՀ-ում մանկավարժը լսարան մտնելուց առաջ պետք է ինքն իրեն հարց տա, եթե ես լինեի նրանց փոխարեն ի՞նչ հոգեկան վիճակում կլինեի: Դրանից հետո դու նրանց կընկալես որպես աշակերտ, մարդ, որը ինչ որ տեղ, ինչ որ պայմաններում սայթաքել է, խախտել է օրենքը, որի համար կրում է պատիժ:

Սովորող – դատապարտյալներից՝ 44- օրյա պատերազմի օրերին եղան դիմումներ՝ կամավոր գնալու ռազմաճակատ, ըստ իս մեր դպրոցի մանկավարժական կոլեկտիվի բացատրական աշխատանքներն ու ջանքերը նույնպես օգնեցին Հայրենասիրության դաստիարակության գործին:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՔԿՀ – ներում կրթական ծրագրերը նույնն են, ինչ բոլոր հանրակրթական դպրոցներում, սակայն իրականում տեխնիկական և կրթության համար գրենական պարագաների հարցում կան շատ բացեր, որոնք մինչ այժմ չեն կանոնակարգվել և չեն լուծվել: Ըստ իս սա կառավարական մակարդակի հարց է, որը պետք է լինի մեր ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Որպեսզի նման դպրոցներում կազմակերպվի կրթությունն ըստ հանրակրթական չափորոշիչների վերը նշված թերությունը (բացը) պետք է կարգավորվի, հակառակ դեպքում մեր աշխատանքի արդյունքը չի գերազանցի 50% - ը, որն ըստ շատ ցածր ցուցանիշ է :

Մեր աշխատանքի արդյունքը մենք տեսնում ենք նրանում , որ ազատվելուց հետո մեր դատապարտյալ – սովորողները չեն դառնում կրկնահանցագործներ, շարունակում են իրենց կրթությունը Հանրապետության այլ ուսումնական հաստատություններում, կազմում են ընտանիք, ավելի սերտ են կապվում իրենց ընտանիքին, գտնում են աշխատանաք, այսինքնդառնում են հասարակության լիարժեք անդամներ:

Սակայն կան նաև բացառություններ, ովքեր չեն կարող սերտաճել հասարակության մեջ, դրանք երկար տարիներ անցկացրել են բանտում, որտեղ ոչ աշխատել են, ոչ էլ զգացել որևէ տնտեսական խնդիրների լուծման կարիք: Այս դատապարտյալները հիմնականում ունենհոգեբանական խնդիրներ, չեն ընդունում այլոց կարծիքն ու գործող օրենքները:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ մեզանից պահանջվում է առավել ջանքեր, տանելու բացատրական աշխատանքներ, որ կյանքը տրվում է մեկ անգամ և այն միակն է , պետք է ունենալ այն բոլոր լավը, որը տրվում է մեկ անգամ, դա քոնն է , քո անունը…

Վերջապես ՔԿՀ-ում կազմակերպել հանրակրթություն դա շատ բարդ և քրտնաջան աշխատանք է :

Այստեղ ցանկացած մանկավարժ պետք է կիրառի իր դասավանդման մեթոդները, նույնիսկ տարբեր օրեր պետք է փոխի դատապարտյալ – սովորողի հետ շփման նախկին մեթոդը , նույնիսկ տարբեր ժամերի սովորողը կարող է ունենալ այլ տրամադրություն, դրա

համար մենք պետք է լինենք ճկուն, համբերատար, չվիրավորենք նրանց ինքնությունը, կարողանանք մտնել նրանց դրության մեջ, այս կերպ սովորող – մանկավարժ հարաբերությունը կլինի փոխվստահելի, մանկավարժը կդառնա նրա ընկերն ու բարին ցանկացողը:

Մանկավարժի աշխատանքի վերջնարդյունքը միշտ երևում է տարիներ հետո, իսկ ՔԿՀ-ի ուսուցիչ- մանկավարժ – հոգեբանի աշխատանքի արդյունքը շատ ավելի շուտ է երևում՝ դատապարտյալն ազատվելուց հետո սերտաճում է հասարակության հետ, թ՞ե դառնում է կրկնահանցագործ:

ՔԿՀ-ում դասավանդող մանկավարժը ամեն օր աշխատանքից հետո պետք է գնահատի տվյալ օրվա իր աշխատանքը, նախապատրաստվի հաջորդ դժվարին օրվան:

«Արթիկի երեկոյան դպրոց» ՊՈԱԿ-ի «Արթիկ» ՔԿՀ-ի աշխատակիցներն ապահովում են բանտարկյալներին ուղղելու և ազատման նախապատրաստելու հարցը, ապահովում են բանտարկյալներին կրթություն ստանալու հնարավորությունը (հատուկ ուշադրություն պետք է դարձվի անգրագետների և երիտասարդների կրթությանը), (Բ.Հ.Վ.Մ.Կ-գլուխ-2 2.2.3 կետ բանտարկյալների դասակարգումն ու անհատականացումը, Աշխատանքի մեջ ներգրավելու կանոնները՝ 6 կետ)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բանտարկյալների հետ վարվեցողության միջազգային կառուցակարգերը:

Հեղինակ – Ն.Գ. Առուստամյան

Ն.Խ. Հովհաննիսյան

Ք. Երևան 2010թ

2. Կալանավորված և դատապարտված անձանց իրավունքները Հայաստանում

(ուղեցույց), Երևան 2009թ

3. Միավորված ազգերի կազմակերպության կայքը՝ http://www.un.org/

4. ԵԽ-ի պաշտոնական կայքը՝ http://www.coe.int/